ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնների վերաբերյալ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ

- աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության տարածքային երրորդ բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-100),

- աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության տարածքային երկրորդ բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-66)

- աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության տարածքային երրորդ բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.2-60),

- աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-471)

- աշխատակազմի կենսաապահովման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-33),

- աշխատակազմի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-553),

- աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության տուրիզմի բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-561),

- աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության գովազդի բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-229)

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնների առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնները մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ը ժամը 10:00: Խնդրում ենք դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request.am էլեկտրոնային հասցեին: Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք.Երևան,

Կառավարական տուն N 3, հեռ. 010-515131): ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
աշխատակազմ